

ՀՀ Առողջապահության նախարար
պրն. Հ. Քուշկյանին

14 ապրիլի, 2008թ.

Հարգելի պարոն նախարար,

Մենք, «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի անդամներս, խորապես գնահատում ենք ՀՀ Առողջապահության նախարարության հետ արդյունավետ համագործակցությունը և ծխախոտի դեմ պայքարում Ձեր անձնական աջակցությունը և ներդրումը, ինչպես նաև մեզ անհանգստացնող հարցերին տրվող արձագանքը:

Այս նամակի նախաձեռնությունը բխում է այն հայտնի փաստից, որ Հայաստանի Հանրապետությունը 2004թ.-ի նոյեմբերի 29-ից անդամակցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա»-յին (ԱՀԿ ԾՊՇԿ)՝ ստանձնելով մի շարք կարևոր պարտավորություններ: Համաձայն ԱՀԿ «Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա»-յի Հոդված 5.3-ի, «ծխախոտի դեմ պայքարի իրենց քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում Կողմերը գործում են այնպես, որ ազգային օրենսդրության համապատասխան, պաշտպանեն իրենց քաղաքականությունը ծխախոտի արդյունաբերության առևտրային և այլ կորպորատիվ շահերից»:

Մենք իրապես անհանգստացած ենք ՀՀ Առողջապահության նախարարության հանրային իրազեկման հեռուստաժրագրի «ԱՐ» հեռուստաընկերությամբ հեռարձակվելու կապակցությամբ: Այսպես, օրինակ, ՀՀ Առողջապահության նախարարության աջակցությամբ պատրաստված մարտի 17-ի պետական հակածխախոտային քաղաքականության լուսաբանմանը նվիրված հաղորդման հեռարձակումը «ԱՐ» հեռուստաընկերության եթերում ուղղակիորեն հակասում է ԱՀԿ ԾՊՇԿ-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին: «ԱՐ» հեռուստաընկերությունը, որպես «Գրանտ հողինգ»-ին պատկանող մի կազմակերպություն, հանդիսանում է նաև համապատասխան

կորպորատիվ շահերը կրող, հետևաբար, ՀՀ Առողջապահության նախարարության հեռուստածրագրի հեռարձակումը տվյալ հեռուստաընկերության եթերում կարող է դիտվել որպես Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիա»-յի տարրի ու ոգու խախտում:

Հավելենք, որ «ԱԲ»-ի հեռարձակման տարածքը չի ընդգրկում հանրապետության մի շարք մարզեր, այդպիսով, այն չի կարող պետական քաղաքականության լուսաբանման արդյունավետ միջոց ծառայել:

Այս նամակով մեր մտահոգությունը կիսելու նախաձեռնությունը բխում է ԱՀԿ ԾՊՇԿ-ի դեկավար սկզբունքներից, որի համաձայն “քաղաքացիական հասարակության մասնակցությունը կենսական անհրաժեշտություն է սույն Կոնվենցիայի և նրա արձանագրությունների նպատակին հասնելու համար” (Հոդված 4.7), ինչպես նաև մեր համոզմունքից, որ Ձեր հետևողական դիրքորոշման շնորհիվ ներկա խնդրահարույց իրավիճակը կկարգավորվի ի օգուտ հանրային առողջության շահի և էթիկայի:

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի անդամ կազմակերպություններ՝ «Բաց բժշկական ակումբ» ՀԿ, «Բարեկեցություն և առողջություն» ՀԿ, «Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ, «Գրեյթմեդ» բժշկական ՀԿ, «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ, «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ, «Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Հաղարծին» երիտասարդական ՀԿ, «Համայնքային զարգացման ու սոցիալական աջակցության կենտրոն» ՀԿ, «Մարդիկ հանուն առողջ ապրելակերպի» ՀԿ, «Միավորված կանանց խորհուրդ «Վերելք»» ՀԿ, «Սյունյաց տիկնայք» ՀԿ, «Վստահության դռներ» ՀԿ

Հարգանքով,

Նարինե Մովսիսյան

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի համակարգող